Այստեղից էր Թէոդորոս Ռշտունին՝ եօթներորդ դարու հերոսը, որը արաբացոց անընդհատ արշաւանքների ժամանակ կայծակի նման Հայաստանի մի կողմից դէպի միւսն էր թռչում, եւ հայոց արեան ծարաւի արաբացոց հրոսակներին ջարդում էր, եւ երբեմն իր սուրը նենգաւոր յունաց դէմ էր դարձնում:

Այստեղից էր յիշեալ Թէոդորոս Իշխանի որդի Վարդ Պատրիկը՝ յունաց ոխերիմ թշնամին, որը յունաց զօրքերի Գայլ գետի շարժական կամուրջից անցնելու ժամանակ կտրեց կամոջրջի ծայրը, ամէնքը հոսոեցան դէպի գետի մէջ, եւ մնացածներին կոտորել տոեց: Յոյները այն աստիճան բարկացած էին այդ քաջի դէմ, որ կենդանութեան ժամանակ, չկարողանալով վնասել նրան, մեռնելուց յետոյ որոնում էին հանգուցեալի գերեզմանը, որպէսզի ոսկորներից վրէժխնդիր լինեն: Բայց Հայոց-ձորի երախտագէտ ժողովուրդը, զգուշանալով յունաց չարութիւնից, Խորգոմ գիւղում, ծովի ափի մօտ, մի եկեղեցի կառուցին եւ քաջի մարմինը նրանում հանգուցին: Այդ եկեղեցին ծածկեցին հողով, եւ կազմոեցաւ մի բարձր բլուր, որի վրայ կառուցեցին մի այլ եկեղեցի: Ոստանից փոքր-ինչ հեռու, Մահռաշտ բարձրադիր եւ զարճալի գիւղում, մինչեւ այսօր նկատւում են Վարդ Պատրիկի շքեղ ապարանքների աւերակները: Այդ ծովեզրեայ գիւղը քաջի ամառանոցն էր, իսկ Աղթամար կղզում գտնւում էր նրա հօր բերդը, որ յետոյ ժառանգեց որդին:

Գագիկ Արծրունին աւելի գեղեցկացրեց Ոստանը, նորոգելով եւ ամրացնելով հին բերդը եւ իր համար փառաւոր պալատներ կառուցանելով: Այդ բոլորը մի առանձին հիացմունքով նկարագրում է Վասպուրականի ոգելից պատմագիրը՝ Թոմայ Արծրունին: Իմ նկարագրութիւնը շատ անգոյն կը լինէր նրա գեղարոեստական գրչի առջեւ: Ես թողնում եմ այդ, միայն մի բան չէ կարելի չյիշեցնել, որ Ոստանը, Ռշտունեաց գաւառի ամուր բերդ լինելուց յետոյ էր միեւնոյն ժամանակ նրա վաճառաշահ քաղաքը: Նա մի կողմից մօտ էր Դատոանի նաւահանգստին, միւս կողմից, այն մեծ քարաւանի ճանապարհին, որ տանում է Վանից դէպի Մուշ եւ Բաղէշ: Այդ էր պատճառը, որ Ոստանի հովիտը մի ժամանակ ունէր մինչեւ հարիւր հազար հայ բնակիչ: Բայց տասնեւհինգերորդ դարում Սկանդերբեկը, որ, Հայաստանի մի մասին տիրելով, իրան կոչեց Շահ-արմեն (թագաւոր հայոց) այդ բարբարոսը, Վան քաղաքը աւերակ դարձնելուց յետոյ, Ոստանն էլ բոլորովին անմարդաբնակ դարձրեց: Նա կործանեց հին բերդը, կործանեց բոլոր ամրութիւնները, նա կործանեց Գագիկի կառուցած պալատների մնացորդները:

Այժմ Ոստանի փառքից, նրա հազարաւոր հայ բնակիչներից, մնացել էին մի քանի քրդական խրճիթներ միայն: Այդ գետնափոր խրճիթների եր-